ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

16 մայիսի 2016 թվականի **թիվ 45** քաղ. Մոսկվա

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2016 թվականի փետրվարի 12–ի թիվ 1 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

«Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մասին» հիմնադրույթի 24-րդ կետի 6-րդ ենթակետին («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29–ի պայմանագրի 1-ին հավելված) եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2016 թվականի փետրվարի 12–ի «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի դեպարտամենտների ցանկի, հաստիքների թվի հաստատման եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի անդամների միջեւ դրանց բաշխման մասին» թիվ 1 որոշման 4-րդ կետին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհուրդը **որոշեց.**

1. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2016 թվականի փետրվարի 12–ի «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի դեպարտամենտների ցանկի, հաստիքների թվի հաստատման եւ

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի անդամների միջեւ դրանց բաշխման մասին» թիվ 1 որոշման մեջ կատարել փոփոխություններ հավելվածի համաձայն:

2. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում 2016 թվականի օգոստոսի 1-ից:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից՝	Բելառուսի Հանրապետությունից՝	Ղազախստանի Հանրապետությունից՝	Ղրղզստանի Հանրապետությունից՝	Ռուսաստանի Դաշնությունից՝
Վ. Գաբրիելյան	Վ. Մատյուշեւսկի	Բ. Սագինտաեւ	Օ. Պանկրատով	Ի. Շուվալով

ՀԱՎԵԼՎԱԾ

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի խորհրդի 2016 թվականի
մայիսի 16-ի թիվ 45 որոշման

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի
2016 թվականի փետրվարի 12–ի թիվ 1 որոշման մեջ կատարվող

1. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի դեպարտամենտների՝ նշված Որոշմամբ հաստատված ցանկի 10-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«10. Աշխատանքային միգրացիայի եւ սոցիալական պաշտպանության դեպարտամենտ։»։

2. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի դեպարտամենտների՝ նշված Որոշմամբ հաստատված հաստիքների թիվը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի խորհրդի2016 թվականի
փետրվարի 12-ի թիվ 1 որոշմամբ
(Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի խորհրդի 2016 թվականի
մայիսի 16-ի թիվ 45 որոշման
խմբագրությամբ)

ՀԱՍՏԻՔՆԵՐԻ ԹԻՎ

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի դեպարտամենտների

Անվանում	Քանակ, մարդ
Կոլեգիայի նախագահ եւ անդամներ	10
Կոլեգիայի նախագահի քարտուղարություն	12
Ինտեգրման եւ մակրոտնտեսության հարցերով կոլեգիայի անդամի (նախարարի) քարտուղարություն	8
Տնտեսության եւ ֆինանսական քաղաքականության հարցերով կոլեգիայի անդամի (նախարարի) քարտուղարություն	8
Արդյունաբերության եւ ագրոարդյունաբերական համալիրի հարցերով կոլեգիայի անդամի (նախարարի) քարտուղարություն	8
Առեւտրի հարցերով կոլեգիայի անդամի (նախարարի) քարտուղարություն	8

Անվանում	Քանակ, մարդ
Տեխնիկական կարգավորման հարցերով կոլեգիայի անդամի (նախարարի) քարտուղարություն	8
Մաքսային համագործակցության հարցերով կոլեգիայի անդամի (նախարարի) քարտուղարություն	8
Էներգետիկայի եւ ենթակառուցվածքի հարցերով կոլեգիայի անդամի (նախարարի) քարտուղարություն	8
Մրցակցության եւ հակամենաշնորհային կարգավորման հարցերով կոլեգիայի անդամի (նախարարի) քարտուղարություն	8
Ներքին շուկաների, տեղեկատվայնացման, տեղեկատվական–հաղորդակցական տեխնոլոգիաների հարցերով կոլեգիայի անդամի (նախարարի) քարտուղարություն	8
Արարողակարգի եւ կազմակերպական ապահովման դեպարտամենտ	69
Ֆինանսների դեպարտամենտ	36
Իրավական դեպարտամենտ	46
Գործերի կառավարման դեպարտամենտ	53
Ինտեգրացիայի զարգացման դեպարտամենտ	34
Մակրոտնտեսական քաղաքականության դեպարտամենտ	31
Վիճակագրության դեպարտամենտ	32
Ֆինանսական քաղաքականության դեպարտամենտ	36

Անվանում	Քանակ, մարդ
Ձեռնարկատիրական գործունեության զարգացման դեպարտամենտ	36
Աշխատանքային միգրացիայի եւ սոցիալական պաշտպանության դեպարտամենտ	16
Արդյունաբերական քաղաքականության դեպարտամենտ	44
Ագրոարդյունաբերական քաղաքականության դեպարտամենտ	29
Առեւտրային քաղաքականության դեպարտամենտ	44
Մաքսային-սակագնային եւ ոչ սակագնային կարգավորման դեպարտամենտ	57
Ներքին շուկայի պաշտպանության դեպարտամենտ	35
Տեխնիկական կանոնակարգման եւ հավատարմագրման դեպարտամենտ	61
Սանիտարական, բուսասանիտարական եւ անասնաբուժական միջոցների դեպարտամենտ	32
Մաքսային օրենսդրության եւ իրավակիրառ պրակտիկայի դեպարտամենտ	48
Մաքսային ենթակառուցվածքի դեպարտամենտ	23
Տրանսպորտի եւ ենթակառուցվածքի դեպարտամենտ	39
Էներգետիկայի դեպարտամենտ	30
Հակամենաշնորհային կարգավորման դեպարտամենտ	47

Անվանում	Քանակ, մարդ
Մրցակցային քաղաքականության եւ պետական գնումների ոլորտի քաղաքականության դեպարտամենտ	32
Տեղեկատվական տեխնոլոգիաների դեպարտամենտ	42
Ներքին շուկաների գործունեության դեպարտամենտ	25
ԸՆԴԱՄԵՆԸ	1071»:

3. Նշված Որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի անդամների միջեւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի դեպարտամենտների բաշխման տասնվեցերորդ պարբերությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«Աշխատանքային միգրացիայի եւ պաշտպանության դեպարտամենտ։»: